Հավելված N 22
ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության
նախարարության գլխավոր քարտուղարի
2025 թվականի սեպտեմբերի 25-ի N 745-Ա հրամանի

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳԻՐ

ԲԱՐՁՐ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՍՏԱՐՏԱՓ ԷԿՈՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ՆՈՐԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԽԹԱՆՄԱՆ ԲԱԺՆԻ ԳԼԽԱՎՈՐ ՄԱՍՆԱԳԵՏԻ

1.Ընդհանուր դրույթներ

1.1. Պաշտոնի անվանումը, ծածկագիրը

Բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) տեխնոլոգիական էկոհամակարգի զարգացման վարչության (այսուհետ՝ Վարչություն) ստարտափ էկոհամակարգի և նորարարության խթանման բաժնի (այսուհետ՝ Բաժին) գլխավոր մասնագետ **(ծածկագիր՝ 24-32.2-Մ2-9):**

1.2. Ենթակա և հաշվետու է

Գլխավոր մասնագետն անմիջական ենթակա և հաշվետու է Բաժնի պետին:

1.3. Փոխարինող պաշտոնի կամ պաշտոնների անվանումները

Գլխավոր մասնագետի բացակայության դեպքում նրան փոխարինում է Բաժնի գլխավոր կամ ավագ մասնագետներից մեկը:

1.4. Աշխատավայրը

ՀՀ, ք. Երևան, Կենտրոն վարչական շրջան, Վ. Սարգսյան 3/3

2. Պաշտոնի բնութագիր

2.1. Աշխատանքի բնույթը՝ գործառույթները, իրավունքները, պարտականությունները

Գործառույթները՝

1) Իրականացնում է Հայաստանի Հանրապետության բարձր տեխնոլոգիական ոլորտի (այսուհետ՝ Ոլորտ) էկոհամակարգի զարգացմանն ուղղված ծրագրերի, միջոցառումների պլանավորման և իրականացման աշխատանքները,
2) իրականացնում է ինովացիոն տեխնոլոգիաների Ոլորտում քաղաքականության մշակման աշխատանքներ,
3) իրականացնում է բարձր տեխնոլոգիաների և ինովացիոն տեխնոլոգիաների բնագավառներին վերաբերող իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքները,
4) իրականացնում է բարձր տեխնոլոգիաների Ոլորտում ինովացիոն կարողությունների զարգացման աշխատանքները,
5) իրականացնում է տեխնոլոգիական Ոլորտում նորարարական գաղափարների և ստարտափների ձևավորման և զարգացման էկոհամակարգի ստեղծմանն ուղղված պետական քաղաքականության մշակման ու իրականացման աշխատանքները,
6) իրականացնում է բարձր տեխնոլոգիաների և ինովացիոն տեխնոլոգիաների Ոլորտների զարգացման պետական ծրագրերի ու միջոցառումների մշակման ու իրականացման աշխատանքները:

Իրավունքները՝

1) պահանջել և ստանալ բարձր տեխնոլոգիաների ոլորտի միջոցառումների պլանավորման և իրականացման վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն,
2) պահանջել և ստանալ ՀՀ բարձր տեխնոլոգիաների Ոլորտում միջազգային համագործակցության համաձայնագրերի նախագծեր, անհրաժեշտության դեպքում պահանջել

լրացուցիչ նյութեր,

3) ստանալ և ուսումնասիրել բարձր տեխնոլոգիաների Ոլորտին առնչվող նորարական գաղափարների, ստարտափերի ձևավորման, էկոհամարգի զարգացման ծրագրերի մշակման համար անհրաժեշտ տեղեկատվություն,
4) ուսումնասիրել Ոլորտում օտարերկրյա ներդրումների ներգրավման մեխանիզմների մշակման աշխատանքները և ներկայացնել առաջարկություններ,
5) ծանոթանալ բարձր տեխնոլոգիական Ոլորտի նորարար գաղափարների և նախագծերի արդյունքների առևտրայնացման և գլոբալ շուկաներ արտահանման քաղաքականության և ռազմավարության մշակման աշխատանքներին և ներկայացնել առաջարկություններ,
6) ծանոթանալ տեղական և միջազգային ընկերությունների հետ՝ ծրագրերի մշակման և իրականացման նպատակով տարվող աշխատանքներին,
7) մասնակցել նախարարության այլ կառուցվածքային ստորաբաժանումների ներկայացուցիչների հետ մասնագիտական քննարկումներին:

Պարտականությունները՝

1) ուսումնասիրել միջազգային համագործակցության պայմանագրերի նախագծերի մշակման, ինչպես նաև Ոլորտին առնչվող միջազգային համաձայնագրերով սահմանված հանձնառությունների իրականացման աշխատանքները և ներկայացնել առաջարկություններ Բաժնի պետին,
2) կատարել հայկական և արտերկրյա աքսելերատորների վերաբերյալ առկա տեղեկատվության ուսումնասիրություն և ներկայացնել Բաժնի պետին,
3) ուսումնասիրել բարձր տեխնոլոգիական ոլորտում ՀՀ միջազգային և տարածաշրջանային երկկողմ համագործակցության ծրագրերը, պահանջել միջոցառումների պլանավորման և իրականացման վերաբերյալ անհրաժեշտ տեղեկատվություն,
4) ուսումնասիրել միջազգային լավագույն փորձը՝ բարձր տեխնոլոգիաների և ինովացիոն ոլորտների զարգացման պետական ծրագրերի մշակման նպատակով, ուսումնասիրության արդյունքները ներկայացնել Բաժնի պետին
5) ներկայացնել բարձր տեխնոլոգիական ոլորտում ՀՀ միջազգային և տարածաշրջանային երկկողմ համագործակցության ծրագրերի վերաբերյալ առաջարկությունները,
6) ներկայացնել վարչության աշխատակիցների կողմից ներկայացված բարձր տեխնոլոգիական ոլորտին առնչվող առաջարկությունները,
7) մշակել բարձր տեխնոլոգիական ոլորտը խթանող էկոհամակարգի զարգացման ծրագրերը,
8) ուսումնասիրել բարձր տեխնոլոգիական ոլորտում առկա իրավիճակը, Բաժնի պետին ներկայացնել առաջարկությունները
9) ուսումնասիրել ռազմավարական պլանավորման քաղաքականության, միասնական սկզբունքների, ստանդարտների, ինչպես նաև դրանց իրականացման համար անհրաժեշտ համապատասխան օրենսդրական նորմերի, կարգավորումներն և վարչական ընթացակարգերը,
10) վերլուծել հայկական և արտերկրյա աքսելերատորների միջև կապերի զարգացման խթանման մեխանիզմները, ներկայացնել առաջարկություններ Բաժնի պետին
11) մշակել անհրաժեշտ օրենսդրական նորմերի, կարգավորումների և վարչական ընթացակարգերը՝ միջազգային փորձը ներդնելու համար,
12) վերլուծել ոլորտի տվյալ բյուջետային տարվա ՀՀ պետական բյուջեից ֆինանսավորում պահանջող ծրագրերի կատարումն ու արդյունքային ցուցանիշները, ներկայացնել մասնագիտական եզրակացություն Բաժնի պետին
13) կատարել ոլորտի ռազմավարական պլանավորման քաղաքականության, միասնական սկզբունքների, ստանդարտների, ինչպես նաև դրանց իրականացման համար

անհրաժեշտ համապատասխան օրենսդրական նորմերի, կարգավորումների նախագծերի վերաբերյալ վերլուծություններ,

14) վերլուծել համապատասխան ժամկետներում տեղեկատվության տրամադրման, մշակման աշխատանքներին,
15) մշակել պլանավորման և ծրագրերի իրականացման ճանապարհային քարտեզը և գործողությունների պլանը:

3. Պաշտոնին ներկայացվող պահանջներ

3.1. Կրթություն, որակավորման աստիճանը
Բարձրագույն կրթություն
3.2. Մասնագիտական գիտելիքները
Գործառույթների իրականացման համար անհրաժեշտ գիտելիքներ
3.3. Աշխատանքային ստաժը, աշխատանքի բնագավառում փորձը
Հանրային ծառայության առնվազն երկու տարվա ստաժ կամ երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ կամ ճարտարագիտության կամ տնտեսագիտության բնագավառներում՝ երեք տարվա աշխատանքային ստաժ:
3.4. Անհրաժեշտ կոմպետենցիաներ
Ընդհանրական կոմպետենցիաներ՝
1. Ծրագրերի մշակում
2. Խնդրի լուծում
3. Հաշվետվությունների մշակում
4. Տեղեկատվության հավաքագրում, վերլուծություն
5. Բարեվարքություն

Ընտրանքային կոմպետենցիներ՝
1. Փոփոխությունների կառավարում
2. Ժամանակի կառավարում
3. Ելույթների նախապատրաստում և կազմակերպում
4. Ժողովների և խորհրդակցությունների կազմակերպում և վարում
5. Փաստաթղթերի նախապատրաստում

4.Կազմակերպական շրջանակը

4.1. Աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվությունը
Պատասխանատու է կառուցվածքային ստորաբաժանման աշխատանքների բնույթով պայմանավորված մասնագիտական գործունեության անմիջական արդյունքի համար:
4.2. Որոշումներ կայացնելու լիազորությունները
Կայացնում է որոշումներ աշխատանքների իրականացման բնույթով պայմանավորված մասնագիտական եզրակացությունների տրամադրման և ՀՀ օրենսդրությամբ նախատեսված դեպքերում որոշումների կայացման շրջանակներում:
4.3. Գործունեության ազդեցությունը
Ունի տվյալ մարմնի նպատակների և խնդիրների իրականացման արդյունքների ապահովման մասնագիտական գործունեության որոշակի ոլորտին վերաբերող համապետական ազդեցություն:
4.4. Շփումների և ներկայացուցչությունը
Իր իրավասությունների շրջանակներում շփվում և որպես ներկայացուցիչ հանդես է գալիս տվյալ մարմնի ներսում այլ կառուցվածքային ստորաբաժանումների, այլ մարմինների ներկայացուցիչների հետ, հանդես է գալիս պետական մարմինների և միջազգային կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ ձևավորված աշխատանքային խմբերում:
4.5. Խնդիրների բարդության և դրանց լուծումը
Իր լիազորությունների շրջանակներում բացահայտում է մասնագիտական խնդիրներ և այդ խնդիրներին տալիս է մասնագիտական լուծումներ և մասնակցում է կառուցվածքային ստորաբաժանման առջև դրված խնդիրների լուծմանը: